րենայ. բայց կարծես թէ աս լոյսը ուզած ատենը կը հանէ. վասն զի տեւական չէ, մանաւանդ թէ շատ անգամ վայրկենական կ՚ըլլայ իրեն լուսաւոր երեւնալը: Աս փայլունութիւնը որ գիշերը ծովուն մէջ թիակներուն զարնելէնու նաւերուն քալուածքէն ալ ելած կը տեսնենք, ոմանք կարծեն թէ մեդուսաներուն փոսփորականութենէն առաջ կուգայ, ինչպէս որ ուրիշ անգամ ըսինք. վասն զի ասոնք այնչափ շատուոր են որ բոլոր ծովուն երեսը կը ծածկեն տեղ տեղ:

Հոս դրուած պատկերին մեդուսան Կրօէնլանտի ծովերուն մէջ կը գըտնուի, և մանրացուցով մեծցուցած է. իրեն բնական հաստութիւնը մէկ բըթաչափ է:

Ամսոյ բնական նշանները:

Յունիս:

ՏԱՒՔԸ օրէ օր կը սաստկանայ. թէպէտ երբեմն երբեմն անձրեւները քիչ մը ցուրտ կը բերեն, բայց երկայն չդիմանար:

Ամառը որ աս ամսուս 21ին պիտի սկըսի, շտապելով կը հասնի:

Եկուր մտնենք աս դաշտը. կը տեսնե՞ս որ առջինին պէս ծաղկով զարդարուած չէ հիմա:

Ծաղկըններուն տեղը հիմա հունտերը թափած են. ցորենը հասունցեր է, հնձելու ժամանակն է:

Աս ցորենին մայիսի ցորեն կ՚ըսեն, ինչու որ շատ տարի մայիսի մէջ կը հնձուի:

Տես հնձողները սա ուռենիներուն շուքին տակը, ինչպէս իրենց գերանդին վրան ծռած կը կըտրեն. անոնց ետեւն ալ գեղացի տղաք կտրած ցորենները որայ կը կապեն. ոմանք հընձուած տեղին մէջ կը խաղան կը թաւալին:

Վարսակը իր կանաչ գոյնը կորուսեր է. հասկերը կը դեղնին ու քիչ ատենէն կը ճերմըկին. քիչ ատենէն կը սկըսին իրենց ճերմակ ճերմակ գըլուխները գետին ծռելով՝ մշակները հունձքի հրաւիրել:

Ուէ որ գեղացին սպասէ որ փեճէկը ցորենին վրայէն ելլէ ու հասկը լաւ մը չորնայ, հնձելու ատենը միայն յարդ կը հնձէ:

Պարտիզպանը աս ամսուս մէջ լուբիային, վարունգին, ձմերուկին, սեխին և ասոնց նմաններուն նեցուկ ու ամրութիւն կը դնէ:

Յասմիկին ու պտղատու ծառերուն գետինն ալ կը դարմանէ:

Շաբաթը մէկ երկու անգամ պատուաստները աչքէ կ՚անցընէ, աւելորդ ծիլերը կը կտրէ. ընտանի ճիւղին վրայ օտար ճիւղ չթողուր:

Մեխակին թաղարները շուքի մէջ կ՚առնէ որ արեւէն չթառամին. ծաղկելէն վերջը նորէն դուրս կը հանէ, կտրած ծաղկըններուն ճիւղերն ալ կը կտրէ, որ նոր ծաղկածները լաւ ամրանան:

Մեծ հոգ ունի անպիտան խոտերը խլելու, ու պիտանիներուն ջուր տալու:

Դուն սիրտդ ալ, պարտէզ մըն է Գրիգորիկ, ու պարտիզպանը դուն ես. նայէ որ առաքինութիւն միայն ցանես աճեցընես, ու մոլութեան բոյսերը խլես փճացընես:

ՅՈՒՆԻՍ կայտառ և ջերմիկ
  Զմարգս 'ի ծաղկանց կողոպուտ
  Կազմէ 'ի հունձ և 'ի մերգ:
Իբր 'ի գիշեր համառօտ
  Ցայտնին ծաղկունք դուն ուրեք
  Աստեղք մերձեալք յառաւօտ:
Պարզ և չքնա՛ղ արշալոյս,
  Սակայն փափուկ զաղփաղփուն,
  Տայ յերեսաց արփւոյն խոյս:
Զի՛ հրաշագեղ է ծաղիկ.
  Այլ թէ զպտուղն ոչ բերէ,
  Զի՞նչ օգտեսցի Գրիգորիկ:
Ըղձալութիւն չէ շահ քեզ
  Թէ զերեսօք ունիցիս,
  Եւ ոչ գործովք հաւաստես:
Միտ դիր 'ի ծայր առուակին
  Ի սաղարթունն և հարուստ
  Ի բըրգաձև կեռասին.

Եւ 'ի դրացին իւր դաման,
Ուր մատըռուակ և գայեակ
Է այս վըտակ պաղպաջուն.
Նա ծիրանի, և սա մոյգ
Ծանրագըլխեալ և ճօճեն
Բշբարունակօքն զոյգ զոյգ :
Ընհա խոնարհն և պարկեշտ
Եղակ զօղեալ 'ի մարմանդ
Ձըգէ 'ի գոյնն 'ի հոտ հեշտ :
Մատիր մատամբքդ արդ ընգոյզ,
Քաղեա, տուր փառս հաստողին,
Արա քըմաց քոց անոյշ :
Հա՛պա և դու նայապէս՝
Սըրտիւ քով լե՛ր պտղաբեր,
Յարարողին քո վայելս :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Թէ ո՞վ է տղոց ամենէն սիրելի, զօրաւոր ու հարկաւոր վարպետը :

Շատ խեղճ է այն ժամանակը, և շատ ողբալի է այն մարդը որ կրթութեան օգուտը չեն ճանչցեր, անով մարդուս ազնիւ բնութեան յարգն ալ չեն գիտցեր : Ասոր հակառակ, երջանիկ է այն դարը և երանելի այն մարդը՝ որ բոլոր սրտանց աս ամենահարկաւոր բանին ետևէ եղած է : Մենք կրնանք ուրախանալ մեր դարուն վրայ ալ, որ նոր նոր ջանքով ու հնարքներով կրթութիւնը աւելի դիւրին և օգտակար ընելու ետևէ է, և իրաւցընէ ամէն տեսակ գործիք կրթութեան համար պակաս չէ, ու երթալով կ'աւելնայ. ասով վարպետներն ալ աւելի կը յորդորուին : — Բայց ինչե՞ն է որ շատ հեղ աս ամէն հնարքները բաւական չեն ըլլար տղայ մը շտկելու, և վարպետը բոլոր սրտանց աշխատելէն վերջն ալ՝ տրտմութե՛ ու ակամայ կը հարկադրի որ յուսահատի : — Աս մեծ ու հարկաւոր հարցմունքին պատասխանը տալ ուզելով կ'ըսենք.

Աստն զի այն տղան առաջ ինչպէս որ պէտք է լաւ չէ անցած առաջին սիրելի՝ զօրաւոր ու հարկաւոր վարպետին ձեռքէն, որ է իր ծնողքը, և մանաւանդ մայրը : Կը տեսնենք որ փայտէ գաւազան կլորցընողները գործիք մը ունին՝ մէկմէկէ մանր ծակերով, և ինչուան որ ամենէն պզտիկէն չանցնի գաւազանը՝ չձևանար. բայց քանի որ այն գաւազանը դեռ խորտուբորտ է՝ նախ ամենէն մեծ ծակէն կ'անցընեն. անով թէ առջի ձևը կ'առնէ, և թէ կը դիւրանայ մէկալներուն մէջ մտնելը. թէ չէ, անկարելի է մտցընելը : Ասանկ ալ տղան թէ որ ծնողացը ձեռքը այն առջի բըրտութիւնը չկորսընցընէ, և կրթութեան առջի ձևը չառնէ, ո՛հ, շատ դժուար է (չըսեմ թէ անկարելի) որ բարեկրթութեան ձևը ետևի եկած վարպետներուն ձեռքովը առնէ :

Աստուծոյ նախախնամութե՛ն մասնաւոր շնորհքը պէտք է սեպել, որ տղոց փափուկ և տկար հասակին յարմար՝ անոյշ ու երկայնամիտ դաստիարակ մը պատրաստեր է՝ իր մայրը. և քանի որ քրիստոնեայ բարեպաշտ ծնողք իրենց մեծ շնորհք և զուարճութիւն կը սեպեն բարի զաւակաց տէր ըլլալը, 'ի հարկէ ամենէն մեծ հոգերնին ալ այն պիտի ըլլայ որ զաւկըննին լաւ կրթեն, որպէս զի իրենց պաշտօնին ալ Աստուծոյ դիտած և մարդկանց փափաքած վախճանին հասնի : Ասով կ'իմացուի թէ ասանկ բանի մը անհոգ ըլլալն ալ ի՛նչ վտանգաւոր բան է : Իրաւ ծանր բան է որ մէկը գթասիրտ ծնողաց ըսէ, թէ զաւկըներուդ ամենէն աւելի թշուառութեան պատճառը դուք էք. բայց ափսո՛ս որ չենք կրնար ինքզինքնիս խաբել, ու չըսել թէ աշխարհքիս վրայ այսչափ մարդկանց անկարգ ըլլալուն առջի պատճառը իրենց ծնողքն են :

Քանի որ ծնողի մը ու զաւկի մը մէջ այն բնական սէրը և՛ քաղցրութիւնը կայ՝ որ ուրիշ վարպետ մը չկրնար ազդել, յայտնի է որ ծնողքն է ամենէն սիրելի և զօրաւոր՝ տղուն վրայ իշխողը : Իրաւցընէ, ո՞վ կայ որ այնպէս սրտանց սիրէ զինքը տղայ մը,